# ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՎԱԱՏ-ԳՀԱՊՁԲ-20/2-1

ք. Երևան « 09 » ապրիլի 2020 թ.

**Վարչապետի աշխատակազմն, ի դեմս գործերի կառավարիչ Վ.Պապիկյանի**, որը գործում է աշխատակազմի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **«Բիզնես Էլիտա» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Հակոբյանի,** որը գործում է կանոնադրության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի կարիքների համար սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված քարտերով աշխատող պտտադռնակը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**2.1 Գնորդն իրավունք ունի՝**

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են __10__ օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Ընդունել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

**2.2 Գնորդը պարտավոր է՝**

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Վաճառողն իրավունք ունի՝**

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.4 Վաճառողը պարտավոր է՝**

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 2 220 000 (երկու միլիոն երկու հարյուր քսան հազար) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից

կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո պայմանագրով սահմանված Պատվիրատուի իրավունքները և պարտականությունները փոխանցվում են Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնին՝ բացառությամբ ֆինանսական գործառույթների:

**9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

| ԳՆՈՐԴ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ,<br>Կառավարական տուն 1<br>ՀՀ ՖՆ գանձարանային վարչություն<br>ՀՀ 900011031839<br>ՀՎՀՀ 02505554 | «Բիզնես Էլիտա» ՍՊԸ<br>ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի,<br>Ախուրյան խճ. 2Ա 47<br>«Ինեկոբանկ» ՓԲԸ «Գյումրի» մասնաճյուղ<br>ՀՀ 2050122041991001,<br>ՀՎՀՀ 05519933 |
| /ստորագրություն/<br>Կ.Տ. | /ստորագրություն/<br>Կ.Տ. |

Digitally signed by HAKOBYAN AIDA
6611690247
Date: 2020.04.09 22:42:26 AMT

Հավելված N 1
«09» ապրիլի 2020 թ. կնքված
ՎԱԱՏ-ԳՀԱՊՁԲ-20/2-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | մատակարարման | | |
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | ապրանքային նշանը, մակիշը և արտադրողի անվանումը ** | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | միավորի գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | Հասցեն*** | ենթակա քանակը | Ժամկետը *** |
| 1 | 30191110-1 | քարտերով աշխատող պտտադռնակ | ZKT, ZTK tc 1000 MR100, MR101,C3-200 Merkuri tenda | ՊՏՏԱԴՌՆԱԿԻ փաթեթի տեղադրմամբ /Աշխատողների հաճախումների կառավարման համակարգը/ լրակազմով (պտտադռնակ, USB լարով աշխատող քարտ գրանցող սարք, անցումային համակարգ, ցանցային փոխարկիչ, անընդմեջ սնուցման աղբյուր՝ մարտկոցով, ղեկավարման հսկիչ, պրոքսիմիթի քարտերի ընթերցիչ, պրոքսիմիտի քարտեր, պտտադռնակը պարփակված բազրիքով և դռնակով, ծրագրային ապահովմամբ)<br>«Ապրանքի» Տեխնիկական բնութագիրը, նկարագիրը քանակական և որակական ցուցանիշներով՝<br>Պտտադռնակ (տուրնիկետ)-1 հատ, Պտտադռնակի հնարավորությունները՝ էլեկտրամեխանիկական, որը հեշտ է տեղադրվում և աշխատում է տարբեր տեսակի բիոմետրիկ և քարտային ընթերցիչների հետ: Այն աշխատում է դրսի և ներսի միջավայրում և արտակարգ իրավիճակների ժամանակ թույլ է տալիս ազատ ելք կատարել ՀՀ առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի զբաղեցրած տարածքից, հասցեից /ք. Երևան, Ա.Արմենակյան 129/: Պտտադռնակը/լրակազմ/ պետք է՝ աշխատողներին նույնականացնի 125Կհց | հատ | 2 220000 | 2220000 | 1 | ք. Երևան, Արմենակյան 129 | 1 | Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 30 օրաց. օր |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | հաճախականությամբ աշխատող քարտերի միջոցով, ունենա առնվազն 30,000 քարտ գրանցելու հիշողություն, գրանցված մուտքերի /ելքերի տվյալները պահի ներքին հիշողության մեջ, ընդ որում հնարավորություն տալով գրանցել 60000-100000 գրառում, գրանցված մուտքերի/ելքերի տվյալները փոխանցի կենտրոնացված տվյալների բազա լոկալ ցանցի միջոցով: Պտտադռնակի պարամետրերը՝ բարձրություն՝ 980մմ, լայնություն՝ 560մմ, երկարություն՝ 780 մմ, քաշը՝ 34կգ, թողանցման հնարավորություն՝ 32 մարդ/ռոպե, թողանցման լայնություն՝ 500 մմ, մուտքի լարում՝ 110/220Վ, 50/60 Հց, էներգիայի առավելագույն սպառում՝ 15 Վտ թողանցման ժամանակ, աշխատանքային ջերմաստիճան՝ 20 - 60: Պտտադռնակը պետք է պարփակված լինի հետևյալ պարամետրերով՝ Դռնակ (Մետաղական ուղղանկյուն խողովակ 30*50սմ փոշեներկված շրջանակ+ապակի 4 մմ հաստությամբ, դռնակի չափերը՝ 800մմ լայնք, 850մմ բարձրություն, դռնակը պետք է ունենա մեխանիկական փական): Ռ-աձև ընդհանուր կոնստրուկցիայի երկարությունը պետք է լինի 3.5-4.5 գծամետր, կոնստրուկցիան պետք է համակցվի և ամրանա գործարանային դետալներով: Բազրիք՝ փոշեներկված մետաղական ուղղանկյուն խողովակ 30*50սմ, բարձրությունը 850մմ+ապակի 4 մմ հաստությամբ:<br>USB կարդացող սարք-1 հատ:<br>Անցումային համակարգ /դռան անցում երկկողմանի/-6 հատ, որոնք պետք է տեղադրվեն՝ Երևան քաղաքի տարածքային կենտրոնում /հասցե՝ՀՀ, ք. Երևան, Սայաթ-Նովա 2/, Արևմտյան տարածքային կենտրոն / ՀՀ, մարզ Գեղարքունիք, ք. Սևան Նաիրյան փողոց 189/, Հարավային տարածքային կենտրոնում /ՀՀ, մարզ Արարատ, ք. Արտաշատ-Դալար 3/, Արևելյան տարածքային կենտրոնում /ՀՀ, Սյունիքի մարզ, ք.Սիսյան, Ա.Մանուկյան 5/1/, Հյուսիսային տարածքային կենտրոնում / ՀՀ, Լոռու մարզ, ք. Վանաձոր, Նժդեհի 14/, Մեղրիի սահմանային բժշկասանիտարական հսկիչ կետ (ՀՀ Սյունիքի մարզ ք. Ագարակ մաքսակետի տարածք) | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ցանցային փոխարկիչ-7 հատ՝ Աշխատողների, այցելուների շարժին վերաբերվող ինֆորմացիայի ( գրաֆիկ, իրավունք) և շարժի ինֆորմացիայի արխիվացում և SQL բազայի հետ սինխրոնիզացում: Ինֆորմացիայի թարմացում համակարգչի միացված ժամանակ մինչև 5 վայրկյանի ընթացքում:<br>անընդմեջ սնուցման աղբյուր և մարտկոց (12Վ 7Ա)- 6 հատ՝ Էլեկտրականության բացակայության ժամանակ աշխատանքային ռեժիմի ապահովում առնվազն մինչև 3 ժամ:<br>ղեկավարման հսկիչ-6 հատ՝ Հասցեային սարք, որը կառավարում է անցումային /դռներ, պտտադռնակներ/ համակարգի իրավունքի հնարավորությունները տպասալիկի միջոցով ընթերցիչներից ինֆորմացիան փոխանցվում է համակարգչին համապատասխանաբար ստանում է հրահանգ կատարելու գործողություններ:<br>պրոքսիմիթի քարտերի ընթերցիչ-12 հատ՝ ապահովում է համակարգում գրանցված քարտերի ընթերցումը, ինչպես նաև ինֆորմացիան փոխանցում ղեկավարման հսկիչին: Աշխատանքային հաճախականությունը առնվազն 125 կՀց: Սարքի պարամետրերը՝ բարձրություն՝ մինչև 200 մմ, երկարություն՝ մինչև 200 մմ, լայնություն՝ մինչև 50 մմ: Հնարավորությունները՝ ինտեգրվի տեղադրված պտտադռնակի հետ, աշխատողներին նույնականացնի 125 կՀց հաճախականությամբ աշխատող քարտերի միջոցով, գրանցված մուտքերի/ելքերի տվյալները պահի ներքին հիշողության մեջ, ընդ որում հնարավորություն տալով գրանցել 60000-100000 գրառում, ներառի մարտկոց (12հատ), ունենա մուտքի վերահսկման համակարգերին համակցելու հնարավորություն, գրանցված մուտքերի/ ելքերի տվյալները փոխանցի կենտրոնացված տվյակների բազա լոկալ ցանցի միջոցով:<br>պրոքսիմիտի քարտեր՝ երկկողմանի գունավոր տպագրությամբ (տպագրվող նյութի պարունակությունը և դիզայնը՝ պատվիրատուի համաձայնեցմամբ)-300 հատ:<br>Հնարավորությունները՝ աշխատեն 125կՀց հաճախականությամբ, չափը՝ 86մմ x 54մմ | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | (երկարությանը և/կամ լայնությանը շեղումը +/-5մմ)<br>Ծրագրային ապահովում՝ Աշխատողների հաճախումների կառավարման համակարգը պետք է ունենա բազմալեզու ինտերֆեյս (հայերեն, ռուսերեն, անգլերեն), կենտրոնացված տվյալների բազա, որը կարող է աշխատել այլ տվյալների բազաների հետ, հնարավորություն տա գրանցել առնվազն 300 աշխատողից, ապահովել 2 օգտվողի միաժամանակյա ծրագրով աշխատելու հնարավորություն, ավտոմատ հաշվարկի աշխատողների կազմակերպության ներսում անցկացրած ժամաքանակը, հնարավորություն տա ոչ միայն դիտել, այլ նաև անհրաժեշտության դեպքում խմբագրել աշխատողների մուտքերի/ելքերի տվյալները՝ սակայն բազայում պահելով նախնական տվյալը, փոփոխությունը կատարած օգտվողի անունը, փոփոխության կատարման օրը/ժամը, ներմուծել աշխատողների ցանկը հատուկ ձևաչափին համապատասխանող ֆայլից, ծրագրի յուրաքանչյուր օգտվողի համար սահմանել համապատասխան իրավասություններ, ստեղծել 1-ից ավել գրաֆիկներ (թե՛ ֆիքսված ժամերով, թե՛ ճկուն ժամերով, թե՛ հերթափոխային) և յուրաքանչյուր աշխատակցին վերագրել իր անհատական գրաֆիկն ըստ շաբաթվա օրերի, հնարավորություն տա ավտոմատ պատճենել նախորդ շաբաթվա աշխատանքային գրաֆիկը ընթացիկ շաբաթվան, սահմանել կրկնվող ցիկլային գրաֆիկներ (օրինակ՝ 2 օր աշխատանքային, 1 օր հանգիստ) և մինչև 24 ժամ տևողությամբ հերթափոխեր: Հնարավորություն տա գրաֆիկի մեջ սահմանել ընդմիջում, որը պետք է ավտոմատ պակասեցվի աշխատած ժամերից ընդմիջմանը դուրս չգալու դեպքում, սահմանել մուտքի/ելքի ժամերի և ընդմիջման տևողության համար կլորացման կանոններ, արտաժամյա աշխատանք, ընդ որում թե՛ օրական, թե՛ շաբաթական հաշվարկների միջոցով, մուտքագրել աշխատողների արձակուրդները, գործուղումները, և այլ բացակայության պատճառները, ներմուծել աշխատողների արձակուրդները, գործուղումները, և այլ բացակայության պատճառները հատուկ | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ձևաչափին համապատասխանող ֆայլից, կազմել ոչ աշխատանքային (տոների և հիշատակի) օրերի ցանկ: Հնարավորություն տա կազմել հաշվետվություններ ցանկացած ժամանակահատվածի և ցանկացած աշխատողի համար՝ անհրաժեշտության դեպքում խմբավորելով ըստ ստորաբաժանումների/խմբերի, ընդ որում հաշվետվությունների ցուցակը ներառում է, բայց չի սահմանափակվում «ուշացումների հաշվետվություն, շուտ ելքերի հաշվետվություն, բացակայությունների հաշվետվություն, բացթողնված գրանցումների հաշվետվություն, շուտ մուտքերի/ուշ ելքերի հաշվետվություն, ամսական աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագիր (տաբել), աշխատած ժամաքանակի հաշվետվություն (մանրամասն և/կամ ամփոփ), տոն օրերին աշխատած ժամերի հաշվետվություն, նախատեսված և փաստացի ժամերի համեմատության հաշվետվություն, բոլոր մուտքերի/ելքերի հաշվետվություն, ներկա պահին կազմակերպության ներսում գտնվող աշխատողների հաշվետվություն, ժամանակացույցի հաշվետվություն, սխալ գործառնությունների հաշվետվություն» հաշվետվություններով: Հնարավորություն տա գեներացված հաշվետվությունները տպել, պահել համակարգչում (PDF, DOC և XLS ձևաչափերով) և/կամ ուղարկել էլ.-փոստով, ավտոմատացնել սարքից տվյալների ստացման, տվյալների բազայի պահեստավորման, հաշվետվությունների գեներացման և էլ.-փոստով ուղարկման գործողությունները, կատարել տվյալների բազայի արխիվացում և վերականգնում, կատարել սարքերում գրանցված քարտերի արխիվացում և վերականգնում: Հնարավորություն տա անցակետի մոտ գտնվող համակարգչի էկրանին ցույց տալ քարտով մուտք / ելք կատարած աշխատակցի տվյալները (անուն, ազգանուն, առկայության դեպքում՝ նկար):<br>Այլ պայմաններ՝ իրականացնի Համակարգի տեղափոխման և տեղադրման /մոնտաժային, լարանցման/, ինչպես նաև գործարկման աշխատանքները: Իրականացնի ուսուցման | | | | | | | |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ծառայություն (2 այցելությամբ 2 անձի համար): Ստորաբաժանումների միջև լոկալ ցանցի կապուղիները ապահովում է պատվիրատուն: «Ապրանք»-ի երաշխիքային ժամկետը առնվազն 1 տարի է, որը իր մեջ ներառում է ինչպես ապրանքները, այնպես էլ համակարգի սպասարկման ծառայության հետ կապված աշխատանքները: | | | | | | | |

***** Երևան քաղաքում հասցեի՝ փոփոխման հնարավորություն:*

## ԳՆՈՐԴ

Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործարարական վարչություն
ՀՀ ՀՀ 900011031839
ՀՎՀՀ 02505554

---

/ստորագրություն/
Կ.Տ

## ՎԱՃԱՌՈՂ

«Բիզնես Էլիտա» ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի,
Ախուրյան Խճ. 2Ա 47
«Ինեկոբանկ» ՓԲԸ, «Գյումրի» մասնաճյուղ
ՀՀ 2050122041991001,
ՀՎՀՀ 05519933

---

Digitally signed by HAKOBYAN ANDI 6611690247
Date: 2020.04.09 22:43:39 GMT

Հավելված N 2
«09» ապրիլի 2020 թ. կնքված
ՎԱԱՏ-ԳՀԱՊՁԲ-20/2-1 ծածկագրով

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 30191110-1 | քարտերով աշխատող պտտադռնակ | | | | 2 220 000 | 2 220 000 | 2 220 000 | 2 220 000 | 2 220 000 | 2 220 000 | 2 220 000 | 2 220 000 | 2 220 000 | 2 220 000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով*

**ԳՆՈՐԴ**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ,
Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գանձարանային վարչություն
ՀՀ ՀՀ 900011031839
ՀՎՀՀ 02505554
/ստորագրություն/
Կ.Տ

**ՎԱՃԱՌՈՂ**
«Բիզնես Էլիտա» ՍՊԸ
ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի,
Ախուրյան Խճ. 2Ա 47
«Ինեկոբանկ» ՓԲԸ «Գյումրի» մասնաճյուղ
ՀՀ 2050122041991001,
ՀՎՀՀ 05519933

Digitally signed by HAKOBYAN AIDA 6611690247
Date: 2020.04.09 22:44:29 AMT
/ստորագրություն/
Կ.Տ

*Հավելված N 3*
*« 09 » ապրիլի 2020 թ. կնքված*
*ՎԱԱՏ-ԳՀԱՊՁԲ-20/2-1 ծածկագրով*

| Պայմանագրի կողմ | Պատվիրատու |
|---|---|
| _____ | _____ |
| _____ | _____ |
| գտնվելու վայրը _____ | գտնվելու վայրը _____ |
| հհ _____ | հհ_____ |
| հվհհ _____ | հվհհ_____ |

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
## ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

| Ապրանքը հանձնեց | Ապրանքը ընդունեց |
|---|---|
| _____ | _____ |
| ստորագրություն | ստորագրություն |
| _____ | _____ |
| ազգանուն, անուն | ազգանուն, անուն |
| Կ.Տ. | Կ.Տ. |

*Հավելված 3.1*
*«09» ապրիլի 2020 թ. կնքված*
*ՎԱԱՏ-ԳՀԱՊՁԲ-20/2-1 ծածկագրով*

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

**Հանձնեց** **Ընդունեց**

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____ _____
ազգանուն, անուն ազգանուն, անուն

_____ _____
Ստորագրություն ստորագրություն